Հարգելի պարոն Զադոյան

Կից ուղարկում ենք Հայաստանի ԿՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Հանրային Խորհրդի պետահիրավական հարցերի հանձնաժողովի կողմից ներկայացված հաշվետվության վերաբերյալ պատասխան գրությունը

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ուսումնասիրվել են Հայաստանի ԿՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Հանրային Խորհրդի պետահիրավական հարցերի հանձնաժողովի կողմից ներկայացված՝ 2020-2022թթ միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջեի հայտի նախագծի վերաբերյալ դիտողություններն ու առաջարկությունները, որոնց վերաբերյալ անհրաժեշտ ենք համարում հայտնել հետևյալ նկատառումները.

1. ՀՀ վարչապետի մոտ բյուջեի չափաքանակների քննարկումներից հետո ՀՀ հատուկ քննչական ծառայության պաշտոնական կայքէջում տեղադրվել է 2020-2022թթ ՄԺԾԾ և 2020 թ. բյուջետային ֆինանսավորման լրամշակված հայտը:
2. 1-ին կետում նշված Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի առնչությամբ տեղեկացնում ենք, որ ըստ դրա 4-րդ հոդվածի՝ կողմերը պետք է համագործակցեն մի շարք ոլորտներում, այդ թվում դատահիրավական՝ ապահովելով ներքին բարեփոխումներ: Նշված կոնվենցիոն կարգավորումներն ունեն ընդհանուր բնույթ և ուղղված չեն Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ֆինանսաբյուջետային, ծրագրային բնույթի հարցերի կարգավորմանը, հետևաբար՝ վերոգրյալի համատեքստում նշված միջազգային պայմանագրին հղում կատարելու նպատակահարմարությունը բացակայում է:
3. Որպես միջոցառում ներկայացված պահուստային ֆոնդի՝ 2-րդ կետում նշված դիտարկման վերաբերյալ հայտնում ենք, որ բոլոր պետական մարմինների պահուստային ֆոնդերը ներառված են պետական բյուջեում որպես առանձին միջոցառում /դա բխում է ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությունից/, որը սահմանվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:
4. Դիտողությունների և առաջարկությունների 2-րդ կետում նշված է, որ «անհասկանալի է, թե ինչու միջոցառումներն իրականացնող մարմինների անվանումները լրացված չեն»: Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ կայքէջում տեղադրված՝ «Պետական մարմնի պատասխանատվությամբ իրականացվող բյուջետային ծրագրերն ու միջոցառումների բացվածքն ըստ կատարող պետական մարմինների» վերաբերյալ աղյուսակ Ա-ում նշված են ինչպես միջոցառումների, այնպես էլ դրանք իրականացնող պետական մարմնի անվանումները:

5. Նույն կետում նշված՝ բյուջետային ծրագրում կատարվելիք հիմնական փոփոխությունների, կապիտալ բնույթի հիմնական միջոցառումների, ֆինանսական ակտիվների հիմնական կառավարմանն առնչվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը լրացված չէ, քանի որ այդպիսիք նախատեսված չեն:
6. Ինչ վերաբերում է 3-րդ կետում նշված դիտարկմանը, որ ՀՔԾ 2019, 2020, 2021, 2022 թվականների ծախսային մասերում ամենաքիչ գումարը հատկացվում է ծառայողների վերապատրաստումներին և մասնագիտական ուսուցմանը, ապա հայտնում ենք, որ հաշվարկները կատարվել են «ՀՀ հատուկ քննչական ծառայության մասին» օրենքով սահմանված՝ պարտադիր վերապատրաստում անցնող ծառայողների համար: Ինչպես այդ մասին ներկայացվել է նաև ս. թ. հունիսի 11-ին ՔՀԿ-ների հետ ՀՔԾ-ում տեղի ունեցած հանրային քննարկումների ժամանակ, ծառայությունն իր աշխատակիցների մասնագիտական գիտելիքների կատարելագործման և վերապատրաստման ուղղությամբ աշխատանքներ է տանում միջազգային դոնոր կազմակերպությունների հետ՝ փորձելով խնայել պետական միջոցները:

   Արդեն ընթացքի մեջ են միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի /IRZ/ հետ տարվող աշխատանքները հետևյալ ծրագրային ուղղություններով՝ ՀՀ-ից դուրս բերված ակտիվների հայտնաբերում և վերադարձ, Գերմանիայում գործող՝ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման համակարգի ուսումնասիրություն, Միջազգային իրավական փոխօգնության հարցումների գործընթացի առավել արդյունավետ կազմակերպում: Դրանց շրջանակներում փորձի փոխանակման նպատակով ս. թ. սեպտեմբերին նախատեսվում է սեմինար-քննարկումների կազմակերպում: ՀՀ ՀՔԾ քննիչների վերապատրաստման ծրագրեր են իրականացվում նաև ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության /INL/ ծրագրի շրջանակներում:

7. 3-րդ կետում նշված՝ Հայտերում ներառված վերապատրաստման 1 դասընթացի արժեքին ու միջին տևողությանն առնչվող տեղեկատվության հրապարակման առնչությամբ էլ հայտնում ենք, որ հավելված 3-ի մաս 4-ում նշված են տարվա կտրվածքով ոչ միայն դասընթացների քանակն ու դրանց ընդհանուր արժեքները, որոնց հիման վրա կարելի է հաշվարկել 1 դասընթացի միջին արժեքը, այլև վերապատրաստում անցնողների թվաքանակը, խմբերի քանակը, ինչպես նաև որակավորում ստացածների տեսակարար կշիռը:
8. Ինչ վերաբերում է հարցին, որ մինչ օրս ապօրինի հարստացման ոչ մի գործ դատական քննության առարկա չի դարձել և միայն հարուցված 2 գործ է գտնվում նախաքննական

մարմնի վարույթում, ապա հարկ ենք համարում նշել, որ ապօրինի հարստացման համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածն ուժի մեջ է մտել միայն 2017 թվականի հուլիսի 1-ից, հետևաբար այն կիրառելի է միայն նշված ժամանակահատվածից հետո կատարված արարքների նկատմամբ և հետադարձ ուժ չունի, ինչով էլ պայմանավորված է նշված գործերով քննության բարդությունը:

ՀՀ հատուկ քննչական ծառայություն